ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ՀԱՅԿԱՐԱՄ
(ՀՀՀ)
ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ԼՈԲԲԻՆԳԻ ԱԿՏԻՎԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ

Արտասահմանի ադրբեջանական համայնքների ինքնակազմակերպման, հասարակական տարբեր կառույցների ի հայտ գալու, լոբբինգի ձևավորման փորձերը միջազգային գիտական կամ ռազմավարական ուսումնասիրություններ կատարող մասնագետների կողմից առայժմ քիչ են ուսումնասիրված: Որպես դրա օբյեկտիվ պատճառներ կարող են նշվել ադրբեջանագիտության ոչ այնքան զարգացած լինելը, բուն ադրբեջանական լոբբինգի նորագույն իրողություն լինելը և այլն: Որպես եզակի բացառություններ կարող են նշվել մոսկովյան «Դիասպորի» անկախ գիտական հանդեսում ՌԴ և Վրաստանի ադրբեջանական համայնքների վերաբերյալ հոդվածների հրապարակումը[1]: Այսպիսով, նշված թեմայով ուսումնասիրություն պատրաստելիս պետք է առավելապես հիմնվել ադրբեջանական և միջազգային լրատվամիջոցներում թեմայի շուրջ առկա տեղեկատվական նյութերի և վերլուծական անդրադարձների վրա:

Հայկական կողմի համար ադրբեջանական «դիասպորաների» ինքնակազմակերպման գործընթացը հետաքրքրական է առաջին հերթին ռազմավարական շահերի դիտանկյունից, քանի որ Բաքվի լոբբիստական աշխատանքը կրում է հակահայկական ուղղվածություն: Ավելին, ադրբեջանական «սփյուռքի» ձևավորման պատճառներից մեկը հենց հայկական սփյուռքին դիմակայելու գերխնդիրն էր: Մասնավորապես «ադրբեջանական սփյուռքի» հետ աշխատանքների կազմակերպման համար հիմնված Արտասահմանում բնակվող ադրբեջանցիների հետ աշխատանքային պետական կոմիտեի նախագահ Նազիմ Իբրահիմովի խոսքով «իրենց գերատեսչության հիմնադրման առաջնահերթ նպատակներից մեկը հայկական սփյուռքին հակազդելն էր»[2]:

Ադրբեջանական լոբբինգի ակտիվացման խնդիրն առավել ծավալուն ուսումնասիրության առարկա կարող է հանդիսանալ, ըստ այդմ, նշված անդրադարձի մեջ ներկայացնենք մի քանի տիպական օրինակներ:

Ադրբեջանն ԱՊՀ տարածքում երրորդ պետությունն էր, որի շահերի պաշտպանության համար Միացյալ Նահանգների Կոնգրեսում ձեւավորվեց հանձնախումբ: Մինչև այդ ԱՄՆ օրենսդիրում գործում էին հայկական և ուկրաինական հարցերով հանձնախմբեր:

2004թ. մարտի 25-ին Ադրբեջանի պաշտպանության նախարար Սաֆիսր Աբիևի ԱՄՆ այցի օրերին Կոնգրեսում գրանցվեց Ադրբեջանի հարցերով հանձնախումբը, որը կոչվում էր «Ադրբեջանի բարեկամների խումբ»[3]: Համանախագահներն էին դեմոկրատական կուսակցությունից Սոլոմոն Օրտիսը (Տեխաս) և հանրապետական Կուրտ Ուելդոնը (Փենսիլվանիա): 2007թ. մայիսին Կուրտ Ուելդենին փոխարինեց Բիլ Շաստերը (հանրապետական, Փասադենա): Գրանցման պահին խմբակցությունն ուներ 8 անդամ: Այնուհետե, կառույցի անդամների թվի աճն ունեցավ հետևյալ պատկերը. 2006թ. հունիսին՝ 17[4], 2007թ. մարտին՝ 18, հուլիսին՝ 20, հոկտեմբերին՝ 24, նոյեմբերին՝ 26[5]: 2008թ. փետրվարի սկզբին «Ադրբեջանի բարեկամների» թիվն էր 31[6], այնուհետև Ռենդի Քուլի, Շելի Մուր Կապիտոյի եւ Հորվարդ Գոբլի խմբին միանալով՝ 34, մարտին՝ Թելմա Դրեյկ (հանրապետական Վիրջինիա), Պիտ Մեշընս (հանրապետական, Տեխաս), Էդուֆուս Թաուընս (դեմոկրատ՝ Նյու Յորք) 37[7], ապրիլին՝ Նիկ Ռահալ (դեմոկրատ, Վիրջինիա), Ջո Բարթոն (հանրապետական, Տեխաս) և Գրեսհեմ Բերրեթ (հանրապետական, Հարավային Կարոլինա)՝ 40[8]:

Այսպիսով 2007թ. նոյեմբերից 2008թ. ապրիլն ընկած ժամանակահատվածում Ադրբեջանի հետ բարեկամացել են 14 կոնգրեսական: Հայկական հանձնախմբի անդամների ցուցանիշն այդ ընթացքում 155-ից դարձել է 156:

Նշենք, որ Նյու Յորքից դեմոկրատ Ռենդի Քուլն ավելի վաղ հանդիսացել էր Մեծ Եղեռնի օրինագծի հաստատման աջակիցներից, ապա հետ է կանչել իր ստորագրությունը եւ դարձել «Ադրբեջանի բարեկամ»: «Կոնգրեսմենը միացավ հանձնախմբին այն բանից հետո, երբ Սոլոմոն Օրտիսը և Բիլ Շուստերը նամակով դիմեցին իրեն խմբին անդամակցելու առաջարկով», նշված էր Ադրբեջանի ԱԳ նախարարության հայտարարության մեջ: Հանձնախմբի անդամների աճի թեմայով Ադրբեջանի արտաքին գերատեսչությունը պարբերաբար հանդես է գալիս հաղորդագրություններով:

Միացյալ Նահանգներում ադրբեջանական լոբբինգի ծավալման պարագայում կարեւոր են նաև նախագահական ընտրություններում ադրբեջանական համայնքի ակտիվանալու, համայնքային քվեն ընտրություններում փոքրիշատե ազդեցիկ գործոնի վերածելու փորձերը: 2004թ. Բաքուն առաջին անգամ փորձ արեց ադրբեջանական համայնքը ներգրավել ընտրական գործընթացում: Ջորջ Բուշ - Ջոն Քերի մրցակցության մեջ ադրբեջանական համայնքը կողմնորոշվեց դեպի Բուշը: Պատճառը՝ հստակ էր. դեմոկրատ Քերին նախընտրական փուլում դրսևորում էր ընդգծված հայանպաստ մոտեցումներ: Ադրբեջանական մամուլում նույնիսկ հրապարակում եղավ առ այն, որ Քերին առաջարկում էր «Ադրբեջանին գցել ավտոբուսի տակ, իրաքյան պատերազմում ԱՄՆ-ին ոչ բավարար աջակցելու համար»[9]: Այս մասին որեւէ հրապարակում ԱՄՆ մամուլում կամ Ջոնի Քերիի կայքում չի հանդիպել և ակնհայտ խոսքն ադրբեջանական հերթական ապատեղեկատվական աշխատանքի մասին էր: 2004թ. նոյեմբերի 3-ի ընտրություններից կարճ ժամանակ առաջ գործարկվեց «Ադրբեջանը հանուն Բուշի»՝ www.azerbaijanforbush.com կայքը[10]: «Իր դիրքորոշումը ադրբեջանական համայնքը հիմնավորում է այն իրողությամբ, որ նախագահ Բուշն աջակցում է Ադրբեջանին, Սպիտակ տունը ընդունում է, որ Ադրբեջանը սատարում է Միացյալ Նահանգներին ահաբեկչության դեմ պայքարում»,- նշված էր այս թեմայով ռուսաստանյան կայքի վերլուծականում[11]:

Ժամանակի սղության և փորձառության պակասի պատճառով կայքը և համապատասխանաբար Միացյալ Նահանգներում բնակվող ազերիները չկարողացան բավարար աշխատանք կատարել: 2008թ. ընտրություններում պատկերը որակապես տարբերվում է: Դեռևս «փրայմերիզների» շրջանում, երբ զույգ կուսակցություններում վիճարկվում էր նախագահի թեկնածուի հարցը, ԱՄՆ ադրբեջանական համայնքը կողմնորոշվեց դեպի հանրապետական Ջոն Մքկ-Քեինը:

Որպես դրա պատճառներ նշվում էին վերջինիս այցն Ադրբեջան, Ցեղասպանության հիմնախնդրում պասիվ դիրքորոշումը դեմոկրատ թեկնածուներ Բարաք Օբամայի և Հիլլրի Քլինտոնի համեմատությամբ: Նաև ընդունված տեսակետ է, թե հանրապետական կուսակցությունն ավանդաբար առավել կողմնորոշված է դեպի Թուրքիան: «Ադրբեջանական համայնքի համար առավել նախընտրելի թեկնածու էր

Ջոն Մըկքեյնը, իսկ հայկական կողմի համար համապատասխանաբար Բարակ Օբաման: Այս ֆոնին Հիլըրի Քլինտոնին աջակցելու հարցը նահանջեց հետին պլան», նշում է Լոս Անջելեսում Ադրբեջանի հյուպատոս Էլին Սուլեյմանովը[12]: Այսքանով հանդերձ, հյուպատոսի խոսքով, ԱՄՆ ադրբեջանական համայնքի սահմանափակ թվով ակտիվիստներ սատարում են Հիլըրի Քլինտոնին:

Ադրբեջանական լոբբինգի ակտիվացման աշխատանքի տեսանկյունից տիպական կարող է համարվել նաև Նիդերլանդների Հաագա քաղաքում 2008թ. փետրվարի 24-ին «Խոջալիի ցեղասպանության» զոհերի հուշարձանի տեղադրումը[13]: Սա Թուրքիայից և Ադրբեջանից դուրս առաջին հակահայկական հուշարձանն է: Ավելին, փաստացի մինչև օրս արտասահմանյան երկրներում տեղադրվել են Մեծ Եղեռնի զոհերի հուշարձաններ և թուրք-ադրբեջանական կողմը այս դեպքերում գտնվել է պաշտպանվողի դիրքում: Այժմ Բաքուն ձգտում է փոխել ստատուս քվոն:

Բացման արարողությանը ներկա էին Ադրբեջանի եւ Թուրքիայի դեսպանատների աշխատակիցները, թեման լայնորեն լուսաբանվել է թուրք-ադրբեջանական ԶԼՄ-ներում: Հուշարձանի տեղադրման աշխատանքները ստանձնել էր Նիդեռլանդների ադրբեջանական միությունը, որի ղեկավար Իլհան Աշքընը ծնունդով Թուրքիայից է, Իգդիրի տարածաշրջանից: Հուշարձանի բացումը նաև երևակեց թուրք-ադրբեջանական համայնքային միությունների աստիճաբնական մերձեցման խնդիրը, որը կարևոր գործոն է թվում հակահայկական լոբբինգի հնարավոր հեռանկարները և միտումները պատկերացնելու դիտանկյունից:

2008թ. ապրիլին Արտասահմանում բնակվող ադրբեջանցիների հետ աշխատանքային կոմիտեի նախագահ Նազիմ Իբրահիմովը Աշքընին պարգևատրեց «Գոբուստան» մեդալով: 2007թ. հաստատված «Գոբուստան» մեդալը տրվում է այն անձանց կամ կառուցներին, որոնք մեծ ներդրում են ունենում ադրբեջանական սփյուռքի ձեւավորման, ամրապնդման, քարոզչական աշխատանքների գործում[14]:

Որպես ադրբեջանական լոբբինգի ակտիվացման տիպական օրինակ տեղին է ներկայացնել նաև Իսրայելի Քնեսետում Հայոց ցեղասպանության հարցի առաջքաշման շուրջ ձևավորված վիճակը: Ադրբեջանական մամուլում զգալի թիվ կազմեցին օրինագիծը

վատաբանելու, հակազդելու հրապարակումները. ծավալվեց քարոզչական աշխատանք: Բաքուն փորձեց աշխատել նաև Իսրայելի ադրբեջանական համայնքի հետ: Իսրայելի ադրբեջանցիների Կոնգրեսի ղեկավար Ալեքս Շապիրո-Սուլիմանը հայտարարեց, թե «պատմական հարցերի ուսումնասիրման պարագայում պարզ կդառնա, որ առաջին աշխարհամարտի ընթացքում ոչ թե հայերն են ենթարկվել ցեղասպանության, այլ թուրքերն ու ադրբեջանցիներն են ենթարկվել հայերի ցեղասպանությանը»[15]: Անհասկանալի է, թե ինչպես կարող էին հայերը ցեղասպանության ենթարկել թուրքերին Օսմանյան կայսրության համընդհանուր հայաթափման պայմաններում: Ադրբեջանական Կոնգրեսը դիմեց Իսրայելի նախագահ Շիմոն Պերեսին, օրենսդիր և գործադիր իշխանություններին, իրենց բնորոշմամբ, «այս հարցում արդար դիրքորոշում դրսևորելու կոչով»: Իսրայելում գործող «Ադրբեջան - Իսրայել» միության նախագահ, խորհրդարանական Իոսի Շագալն օրենսդիրում ակտիվ աշխատանք ծավալեց օրինագծի հաստատումը խափանելու նպատակով[16]:

Ուշագրավ է Քնեսետի Իսրայել-Հայաստան բարեկամության խմբի նախագահ Զեև Էլքինի հայտարարությունը, որ օրինագիծն առաջադրած պատգամավորները «մեծ ճնշում են զգում ԱԳՆ-ի և թուրքական լոբբիի կողմից, որին միացել է նաև ադրբեջանականը»: «Պետք է ընդգծել, որ նրանք բավական օպերատիվ կերպով արձագանքեցին, ինչը, ցավոք, չեմ կարող ասել Հայաստանի և հայկական սփյուռքի մասին»,- հայտարարել է Էլկինը[17]: Քնեսետում Հայոց ցեղասպանության հարցի քննարկումները եւս ի ցույց են դրեցին թուրք-ադրբեջանական լոբբիստական աշխատանքները մեկտեղելու միտումը:

Ներկայացվեցին ադրբեջանական լոբբինգի ակտիվացման մի քանի տիպական օրինակներ Միացյալ Նահանգներում, Եվրոպայում և Մերձավոր Արեւելքում: Վերընշված, ինչպես նաեւ այլ փաստերի համադրումը վկայում է, որ Բաքուն շարունակելու է աշխատանքը համայնքների կազմակերպման ուղղությամբ եւ այս աշխատանքը կրելու է ընդգծված հակահայկական ուղղվածություն:

HAYKARAM NAHAPETYAN
(PTCA)

THE TENDENCIES OF THE ACTIVIZATION OF AZERI LOBBY

Azerbaijan turned to be the third state in former USSR to organize Caucus in US Congress. Currently there are 40 congressmen in Azebaijani Caucus, while Armenian Caucus consists of 156 Congressman. While Azerbaijani Diasporas lobbing activities in US are far below the level Armenian side performs, the intentions and processes are noteworthy. At the same time, in February 2008 first anti-Armenian monument dedicated to "Khojali Genocide" was unveiled in Haague thanks to activities of Azerbaijani as well as Turkish organizations of Netherlands. Azerbaijani lobbing activities in Near East, Russia and Ukraine are interesting as well. As Azerbaijani authority declared: one of the purposes of Azerbaijani lobby is to counter Armenian Diaspora.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. "Азербайджанцы в Грузии: этнические границы в постмногонациональную эпоху", Румянцев С., "Диаспоры", М., 2007 N I – 2, "Азербайджанцы в России – Смена имиджа и социальных ролей", Ариф Юнусов, "Диаспоры", 2005 N 3.
2. "Ибрагимов Н.: - Создание азербайджанского лобби стоит дорого", Э. Фахрединоглу, "Эхо".
3. "Американские конгрессмены прибыли в Баку", www.echo-az.com. 27.05.2004.
4. "American Turkish Association Assamblcy Needs Azerbaijan Support for not loosing Armenians", 27.06.2006, www.ans.az
5. "Демократ из Алабамы вошел в рабочую группу Конгресса США по Азербайджану", "Zerkalo", 09.11.2007
6. "Рабочая группа по Азербайджану пополнилась еще двумя конгрессменами США", www.day.az. 09.02.2008.
7. "Еще два республиканца стали членами рабочей группы по Азербайджану " 03.03.2008 "Еще один конгрессмен стал членом Конгресса США по Азербайджану", 17.03.2008, www.day.az,
8. "Число кон грессменов в рабочей группе по Азербайджану достигло 40", www.day.az, 07.04.2008.
9. "В Баку паника. Живущий на грязные деньги армянских террористов Дж. Керри обещал бросить Азербайджан под автобус", 12.10.2004, http://www.centrasia.ru/newsA.php?st=1097560440
10. Ъ» http://www.asbarez.com/ 10.28.2004.
11. http://www.rol.ru/news/misc/newssng/04/11/02_007.htm
12. Сулейманов Э.: "Если для азербайджанской диаспоры наиболее предпочтительным кандидатом выглядит Маккейн Д., то для армянской – соответственно Барак Обама", www.day.az. 07.02.2008.
13. 13 http://www.azeriunited.com/content/blogcategory/21/52/lang,english/
14. "Открытие памятника жертвам Ходжали в Гааге – это большая победа", www. zerkalo.az, 10.04.2008.
15. "Израиль не признает Геноцид армян", www.echo-az.com. 30.03.2008.
16. Спивак Л.: «За обсуждение закона о «геноциде армян» в израильском Кнессете дружно голосовали все депутаты от арабских партий (мусульмане)», www.day.az. 11.04.2008.
17. «Ձեռ Էկին. թուրքերն, ի տարբերություն հայերի, օպերատիվ կերպով արձագանքեցին Կենեստում ցեղասպանության քննարկմանը», www.oanarmenian.net 10.04.2008.